# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
# № ԳՀԱՊՁԲ-23-9/2-6 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 12.04.2023թ.

**ՀՀ պաշտպանության նախարարությունը,** ի դեմս ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ **Կ. Բրուտյանի**, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ **«Գնորդ»,** մի կողմից, և **«Լիկվոր» ՓԲԸ-ն,** ի դեմս գլխավոր տնօրեն **Ս. Մաթևոսյանի**, որը գործում է «Լիկվոր» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ **«Վաճառող»,** մյուս կողմից, հիմք ընդունելով **03.02.2023թ.** կնքված **№ԳՀԱՊՁԲ-23-9/2-6** գնման պայմանագրի, այսուհետ՝ «Պայմանագիր», 8.15 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը, այսուհետ՝ «Համաձայնագիր», հետևյալի մասին:

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն № 1 և № 2 Հավելվածների:

1.1.1 Պայմանագրի 6.3 կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու կամ չմատակարարելու դեպքում:

1.2 Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, Համաձայնագրով նախատեսված ծավալներով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխան ապրանքներ (այսուհետ՝ Ապրանք)՝ համաձայն Համաձայնագրի № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ Համաձայնագրի № 2 Հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ժամկետներում:

## 2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***1 992 000(մեկ միլիոն ինը հարյուր իննսուներկու հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:*** Գինը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Համաձայնագրի գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3. 3 կետով սահմանված կարգով, բայց ոչ ուշ, քան մինչև 11.12.2023թ:

## 3. Այլ պայմաններ

3.1 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված մյուս դրույթները թողնվում են անփոփոխ:

3.3 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի № 1 և № 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ ապրանքների ձեռքբերման պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը, իսկ կառուցվածքային ստորաբաժանում ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Լիկվոր» ՓԲԸ |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | ՀՀ, ք.Երևան, Քոչինյան 7/9 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144129 | Հ/Հ 2050022101151001 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 01201697 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | Գլխավոր տնօրեն |
| Կ. ԲՐՈՒՏՅԱՆ | Ս. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ |

«ԼԻԿՎՈՐ» "ЛИКВОР" "LIQVOR" 01201697

Հավելված N 1
№ ԳՀԱՊՁԲ-23-9/2-6 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Գնման առարկայի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| չ/հ | CPV անվանումը | անվանումը | չ/մ | քանակը | միավորի գինը (ՀՀ դրամ) | ընդհանուր գումարը (ՀՀ դրամ) | մատակարարման ժամկետը 2023թ. 2-րդ եռամսյակ |
| 5 | դիկլոֆենակ d11ax18, m01ab05, m02aa15, s01bc03 | դիկլոֆենակ նատրիումի, լիդոկայինի հիդրոքլորիդ,diclofenac sodium, lidocaine hydrochloride /Դոլէքս/ | հատ | 4,000 | 456 | 1,824,000 | 4,000 |
| 51 | ֆենիլէֆրին (ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ) C01CA06 | ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ, phenylephrine hydrochloride /Միդոպտիկ/ | հատ | 70 | 2400 | 168,000 | 70 |

Հավելված N 2
№ ԳՀԱՊՁԲ-23-9/2-6 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Գնման առարկայի | | | | | |
|---|---|---|---|---|---|
| չ/հ | CPV կոդը | CPV անվանումը | նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2023թ. պետական բյուջեից ըստ եռամսյակների՝ ընդ որում | | |
| | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 11.12.2023թ. |
| 5 | 33631310/505 | դիկլոֆենակ d11ax18, m01ab05, m02aa15, s01bc03 | 1,824,000 | 1,824,000 | 1,824,000 |
| 51 | 33661159/501 | ֆենիլէֆրին (ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ) C01CA06 | 168,000 | 168,000 | 168,000 |
| Ընդամենը՝ | | | | | 1,992,000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Լիկվոր» ՓԲԸ գլխավոր տնօրեն

Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ